Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

АРМ
2-5481а
2-5481а

ՏՐԱԿՏՈՐԿԵՆՏՐՈՆԻ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ
ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

# ՀՐԱՀԱՆԳ

1932 Թ. ԲԱՄԲԱԿԱՑԱՆՔՍԻ
ԾՐԱԳՐԻ ՑԵՎ ՀԱՅՏԵՐ ՀԱՎԱՔԵԼՈՒ
ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

ՑԱՆՔՍԻ ԲԼԱՆԿՆԵՐԸ
ԼՐԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՀԱՆԳԻ
ՀԵՏ ՄԱՍԻՆ

22851
Г.П.Б. в Лнгр. М
О.Э. 1932 г.
Акт № 153
633.5
Հ-94

1932 ԹԻՖԼԻՍ

Ա. Ֆ. Մյասնիկյանի անվ. տպարան, հրատ. „Զարյա Վոստոկա"-ի

Պատվեր 146 Գլավլիտ 24 Քանակ 250

Арм.
633.5
Ն-94

04 AUG 2010

# ՀՐԱՀԱՆԳ

## 1932 Թ. ԲԱՄԲԱԿԱՑԱՆՔՍԻ ԾՐԱԳՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԱՅՏԵՐ ՀԱՎԱՔԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

### 1. Հասարակական — քաղաքական միջոցառումներ

Հնգամյակի ավարտական տարվա 1932 թ. գարունը, սոցիալիստական վորակի այս տարին, պետք է հանդիսանա սոցիալիստական վերելքի և Անդրկովկասի բամբակագործության վերակառուցման նոր շրջան, միաժամանակ դարձնելով Անդրկովկասը Խորհրդային Միության յերկրորդ բամբակագործության ուժեղ բազա:

Ձեռնարկելով 1932 թ. բամբակագործության ծրագրի իրականացման գործին «Անդրկովկասյան կուսկազմակերպությունները, մասնավորապես Ադրբեջանը, գլխավոր ուշադրությունը պետք է դարձնեն բամբակագործության տարածման վրա, նպատակ դնելով վոչ միայն ընդարձակել բամբակենու ցանքերի տարածությունը, այլև վճռական բեկումն առաջ բերել բամբակենու մշակույթի, լավորակ սերմերի տարածման, ցանքսի և բերքահավաքի վորակը բարձրացնելու և ժամանակին կատարելու գործում, ամեն անգամ յելնելով այն սկզբունքից, վոր Անդրկովկա–



Инв. №

ՀԱԱ
14.06.2013
19206

ը յերկրորդ հնգամյակում պետք դառնա Խորհրդային Միության յերկրորդ ուժեղ բամբակագործական բազան»:

(ՀԿԿ(բ) ԿԿ 1931 թ. հոկտեմբերի 31-ի վորոշումից):

Նախկին տարիների համեմատ յեղած 1931 թ. բամբակացանքի կամպանիայի համեմատական հաջողությունները, այն է՝ 1. բամբակագործական ցանքերի ընդլայնումը, 2. մեքենայացման ընդարձակումը շնորհիվ 1931 թ. կազմակերպված 24 բամբակագործական ՄՏԿ-ների և 3. միջակուլտուրաների բարելավումը նախկին տարիների համեմատ; բայց և այնպես այս ասպարեզում մենք ունենք զգալի թերացումներ: Այս յերևույթը բացատրվում է նրանով, վոր «ընդգրկելով աշխատանքի միմիայն տեխնիկական կողմը, չկարողացանք ապահովել գյուղացիության քաղաքական ճիշտ ղեկավարությունը (չքավոր – միջակ մասսաների) և գոյություն ունեցող կոլտնտեսությունների կազմակերպչական – տնտեսական ուժեղացման համար ուղիղ քաղաքական և կազմակերպչական ղեկավարություն չապահովվեց»: (ՀԿԿ (բ) ԿԿ 1931 թ. հոկտ. 31-ի վորոշ.):

Անվիճելի յե այն փաստը, վոր այն շրջանները, վորոնք կարողացան ապահովել քաղաքական ճիշտ ղեկավարությունը ընկ. Ստալինի 6 ցուցմունքների հիման վրա և ամրացնել կոլտնտեսությունները կազմակերպչորեն ու տնտեսապես, շնորհիվ կոլտնտեսությունների աշխատանքի ճիշտ դասավորման և կազմակերպման, անցկացրին գյուղատնտեսական արտադրության [illegible]վայրերում և բոլոր տեսակի աշ[illegible]տնտեսական և խմբա-

ՀՍՍՌ ... Библиотека
ՀՍՍՌ ... ССР
им. А. Мясникяна
40580-67

կային գործարքի սխալ, հիմնավորապես կազմակերպեցին աշխատանքի ուրիշ ճիշտ հաշվառք և հրաժարվեցին վճարումների «հավասարության» սկզբունքից, վորի հետևանքով և կարողացան կատարել պլանային առաջադրանքները՝ ապահովելով սոցիալիստական աշխատանքի բարձր արտադրողականություն կոլտնտեսություններում:

Այսպես ուրեմն, ձեռնարկելով պլանները մինչև կոլխոզ, գյուղ և անհատ բամբակագործներին հասցնելու աշխատանքին՝ շրջանային կազմակերպությունները պետք է՝

1. Հաշվի առնել անցյալ տարվա սխալները, յերբ շրջաններից շատերում բամբակացանքի ծրագրների քննությունը փոխարինվում եր ձևականորեն հայտեր հավաքելու աշխատանքով և այն էլ բազմաթիվ տեխնիկական սխալներով, վորի հետևանքով մի քանի շրջաններում հարկադրված յեղան կրկնակի և յեռակի կատարել ցուցակագրման աշխատանքները:

2. Առաջիկա տարում ծրագրային առաջադրանքների քննության առնելը և բամբակացանների ցուցակներ կազմելը պետք է ընթանա իբրև կազմակերպված տնտեսա – քաղաքական կամպանիա, ներգրավելով և մոբիլիզացիայի յենթարկելով կոլտնտեսական և չքավորական մասսաները հետևյալ հիմնական լոզունգներով՝

«Գոյություն ունեցող կոլտնտեսությունները կազմակերպչորեն և տնտեսապես մաքսիմալ չափով ամրացնել»:

«Յերկրորդ հնգամյակում Անդրկովկասը դարձնել խորհ. Միության յերկրորդ բամբակագործական ուժեղ բազա»:

«Շարունակել ներգրավել գյուղացիական տնտեսությունները կոլտնտեսությունների մեջ, խիստ պայքար մղելով կոլեկտիվացման ուռճացած տոկոսներ հայտնաբերող տենդենցների դեմ, այն հաշվով, վոր 1932 թ. հիմնականում ավարտվի բամբակագործական շրջանների կոլեկտիվացումը և այս հիման վրա կուլակությունն իբրև դասակարգ լիկվիդացիայի յենթարկվի»: (ՀԿԿ(բ) ԿԿ-ի 1931 թ. օգոստոսի 2-ի վորոշումից):

*Բամբակացանքսի ծրագրերի քննության ժամանակ առանձնապես պետք է կազմվեն կուլակային ուռճացած տնտեսությունների ցուցակները և վորոշվեն նրանց տրվելիք կայուն առաջադրանքները: Անհրաժեշտ է լայնորեն մոբիլիզացիայի յենթարկել կոլտնտեսականներին և գյուղի չքավորությանը կուլակային տնտեսություններին կայուն առաջադրանքներ տալու գործում, ցանքսի, մշակության, բերքահավաքի, այլ կուլտուրաների վարման վերաբերյալ, միաժամանակ կազմակերպելով մասսայական հսկողություն կուլակային տնտեսություններին տրված առաջադրանքները կենսագործելու խնդրում:*

*Բոլոր չքավորական, գյուղական և կոլտնտեսականների ժողովներին պետք է լայնորեն բացատրվեն բամբակացաններին տրվելիք բոլոր արտոնությունները՝ հացամթերքների յերաշխավոր մատակարարում, լծկան անասուններ և գյուղատնտեսական ինվենտար ձեռք բերելու վարկավորման կարգի վերաբերյալ և այլն: Ժողովներին անհրաժեշտ է լսել ՄՏԿ-ի զեկուցումը, քննության առնելով նրա անցյալ տարվա կատարած աշխատանքները, հիմք ընդունելով ՄՏԿ-ի և կոլտնտեսականների միջև յեղած պայմանավորությունների կատարման փոխադարձ ստուգումը:*



*Բամբակացանքսի ծրագրերի քննության և հայտեր հավաքելու բոլոր աշխատանքները պետք է տարվեն սոցմրցակցության և հարվածայնության սոցիալիստական աշխատանքի ձևով: Տարվելիք աշխատանքի կարևորությունը պահանջում է շրջանի ղեկավար և բոլոր ողակների տեխնիկական աշխատանքների բացառիկ ուշադրությունը և զգոնությունը՝ ժամանակին, ճիշտ և քաղաքականապես ուղիղ կատարելու համար առաջադրված խնդիրները:*

*Անկասկած է, վոր բամբակացանքսի ծրագրերի քննությունը և հայտեր հավաքելու աշխատանքը կկատարվի գյուղի կուլակային և հարուստ տարրերի ուժեղ դիմադրության պայմաններում:*

*Պետք է յերբեք մոռանալ, վոր ամեն մի սխալ, դասակարգային զգոնության ամեն մի թուլացում կօգտագործվի դասակարգային թշնամու կողմից՝ կոլտնտեսությունները քայքայելու, բամբակագործության մեր միջոցառումները խանգարելու և վարկաբեկելու նպատակով: Ուստի անհրաժեշտ է կոլտնտեսականների և չքավոր-միջակ մասսաների միջև տանել այնպիսի բացատրական աշխատանք, վորպեսզի հայտնաբերվի և վճռական հարված հասցվի դասակարգային թշնամու ամեն մի հակահեղափոխա-*

կան յելույթին և պրովոկացիոն քայլերին, որոնք ուղղված կլինեն կուսակցության և կառավարության 1932 թվի բամբակագործական ծրագիր իրագործելու միջոցառումների դեմ:

## Բամբակացանքսի ծրագրի քննության ժամկետների մասին

Անդրբամբակկենտրոնի հանրապետական կենտրոնները տեղական ժողկոմխորհի կողմից հաստատված ծրագիրը փոխադրում են շրջանները ոչ ուշ, քան հունվարի 15-ը: Շրջաններում առաջադրված ծրագիրը քննության է առնվում հունվարի 15—20 միջև և հունվարի 20-ին շրջանները փոխադրում են շրջգործկոմների կողմից հաստատված ծրագրերը գյուղխորհուրդներին: Հունվարի 20—30 տեղի յեն ունենում գյուղխորհուրդների պլենումներ, չքավորական կոլտնտեսականների ժողովներ՝ ցանքսի ծրագիրը քննության առնելու համար, որտեղ և միաժամանակ կազմվում են ցանքսի ծրագրներ սահմանված ձևերով. այդ ծրագրները հաստատվում են ընդհանուր ժողովի կողմից:

Հունվարի 30-ից մինչև փետրվարի 5-ը ծրագրներ կազմվում և հաստատվում են շրջանային կազմակերպությունների կողմից:

Փետրվարի 5-ին ՄՏԿ-ի և շրջսերմկոմի կողմից քննված և շրջգործկոմի կողմից հաստատված բամբակացանքսի շրջանային ծրագիրը ուղարկվում է հանրապետական Հողժողկոմին, Անդրբամբակկենտրոնի հանրապետական բաժանմունքին և Անդրբամբակկենտրոնին:



## Շրջանային և գյուղական սերմանման հանձնաժողովների մասին

Բամբակացանքսի կամպանիայի սկզբին տեղերում կազմակերպվում են շրջանային և գյուղական սերմանման հանձնաժողովներ, որոնց վրա դրվում է պատասխանատվություն բամբակացանքսի ծրագրների քննությունը կազմակերպելու, նրանց քննությունը և հետագա ձևակերպումը շրջգործկոմների միջոցով: Շրջանային սերմանման հանձնաժողովի մեջ մտնում են՝ շրջգործկոմի, շրջկոլխոզմիության ներկայացուցիչները, ՄՏԿ վերատեսուչը, բամբակագործարանի ներկայացուցիչները, շրջանային հիդրոտեխնիկը և շրջգյուղտեխը: Գյուղխորհրդին կից սերմկոմի կազմի մեջ մտնում են՝ գյուղխորհրդի, կոլտնտեսության, գյուղատնտեսական ընկերության և գյուղջրվարչության, չքավորական խմբակի ներկայացուցիչները: Գյուղական սերմկոմի կազմի մեջ մտնում են գյուղխորհրդի, չքավորական խմբակի ներկայացուցիչները և կոլտնտեսության նախագահը:

## Ծրագիրը շրջկազմակերպությունների կողմից քննելու կարգի մասին

Հիշատակված ժամկետներում Անդրբամբակկենտրոնի հանրապետական բաժանմունքներից ստացված ցանքսի ծրագիրը ՄՏԿ-ները ներկայացնում են

շրջգործկոմին ցանքսի ծրագիրը նախնական քննության ենթարկելու համար, վորտեղ և նախատեսվում է ցանքսի տարածությունների ըստ սեկտորի, գյուղխորհուրդների, գյուղերի միջև բաժանելու խնդիրը, այլ և շրջանի կուլակային տնտեսություններին կայուն առաջադրանքներ տալու չափը:

Կուլակային — ունեցած տնտեսությունների առաջադրանքների չափը վորոշում է շրջգործկոմը, տալով վերջիններիս մաքսիմալ չափով բամբակացանքսի ծրագիր, սակայն վոչ պակաս տվյալ գյուղի համար սահմանված բամբակացանքսի միջին տոկոսից:

Շրջգործկոմն իրեն կողմից ընդունած բամբակացանքսի ծրագրերն ըստ սեկտորների ուղարկում է հանրապետական Հ.Ժ.Կ. և միաժամանակ հանձնում գյուղխորհուրդներին և կոլտնտեսություններին՝ քննության համար:

Կուլակային — ունեցած տնտեսություններին կայուն առաջադրանքներ տալու ամբողջ աշխատանքը կատարում է գյուղխորհուրդը, շրջգործկոմի ղեկավարությամբ, իսկ ՄՏԿ՝ կուլակային տնտեսությունների բոլոր նախատեսված ցանքերի տարածությունները մտցնում է ընդհանուր ցանքսի ծրագրերի մեջ, նպատակ դնելով ստուգելու նրանց ջրով ապահով լինելը:

### Ծրագրերի քննության և հայտեր հավաքելու կարգը

Գյուղերում և կոլտնտեսություններում բամբակացանքի ծրագրերի քննությունը և մշակումը կատարում են բամբակացանքի գյուղական հանձնաժողովները, վորոնք ջոկվում են անցկացնելու համար



գյուղում բոլոր միջոցառումները բամբակացանքի ծրագրերը քննության առնելու վերաբերմամբ, շրջանից յեկած աշխատակիցները և ՄՏԿ անձնակազմը, վորոնք աշխատում են շրջգործկոմի ղեկավարությամբ: Լիազորված աշխատակիցները գյուղ մեկնելուց առաջ գնման կայանից կամ նախկին Շրջբամբակմիության լիկվիդկոմից ստանում են անցյալ տարվա բամբակացանների ցուցակագրման քարտերը, իսկ ՄՏԿ հանձնում է նրանց 1932 թ. բլանկները և կոլտնտեսությունների 1931 թ. արդֆինպլանները: Գյուղխորհուրդը շրջանից ստացած ծրագրերը քննության է առնում իր նիստում՝ մասնակցությամբ շրջսերմանման, շրջջրտնտեսության և ՄՏԿ ներկայացուցիչների, վորտեղ մանրամասնորեն քննության է առնվում առանձին կոլտնտեսականների և գյուղերի բամբակացանքսի տարածությունը և կուլակային տնտեսությունների համար սահմանում է կայուն առաջադրանքներ:

Գյուղխորհուրդը, կոլտնտեսությունների սուդիչ թիվը հաստատելիս հաշվի յե առնում նրանց ցանքսի տարածությունը և արտադրական հնարավորությունները, ինչպես և կոլտնտեսությունների կազմակերպչական տնտեսական վիճակը, նրանց բամբակացանքսի տարածության ընդարձակման հնարավորություններն ի հաշիվ այլ կուլտուրաների և ամառային ջրապահովման:

Գյուղխորհրդի կողմից ընդունված ծրագիրը հանձնվում է գյուղական սերմանման հանձնաժողովին՝ յուրաքանչյուր բամբակացանին հասցնելու համար: Այդ ծրագիրը գյուղական սերմանման հանձ-

նաժողովն առաջին հերթին քննության է դնում տվյալ գյուղի կամ կոլտնտեսության չքավորական ժողովին, ապա (չքավորական ժողովի առաջարկությունների հետ միասին) բամբակացանների կամ կոլտնտեսության ընդհանուր ժողովներին: Չքավորական ժողովներում պետք է քննության առնվեն հետևյալ հարցերը.

1) 1932 թ. բամբակացանքսի ծրագիրը և բերքատվությունը բարձրացնող միջոցառումները:

2) Տվյալ գյուղի կուլակ-ուռճացած տնտեսությունների ցուցակը և նրանց տրվող առաջադրանքները:

Բամբակացանների և կոլտնտեսությունների ընդհանուր ժողովում, բացի վերոհիշյալ 2 հարցից, քննության են առնվում նաև հետևյալ խնդիրները.

1. ՄՏԿ զեկուցումն իր աշխատանքի և ՄՏԿ-ի ու կոլխոզի միջև կնքված գլխավոր պայմանագրի հիման վրա սահմանված պարտավորությունների փոխադարձ կատարման մասին:

2. Անցյալ տարվա բամբակացանքսի կամպանիայի արդյունքները, հանձնման ծրագրի ու վարկերի մարման ընթացքը տվյալ գյուղում.

3. 1932 թ. աշխատելիք հացի և բամբակացաններին վարկավորելու կարգը և հարկային արտոնությունները:

4. Վոռոգման մանր ցանցի վերակառուցման ծրագիրը և բամբակացանքը ջրով ապահովելու միջոցառումները:

Բացի այդ, բոլոր չքավորական և բամբակացանների գյուղական ընդհանուր ժողովներում միա-



ժամանակ լսվում է մոտակա կոլտնտեսության նախագահի զեկուցումը՝ 1931 թ. կոլտնտեսության կողմից կատարած ցանքսի և բերքի իրացման ծրագրերը կատարելու մասին:

Տվյալ գյուղի կամ կոլտնտեսության ընդհանուր ժողովներում ցանքսի ծրագիրն ընդունելուց հետո (կոլտնտեսության ծրագրերն ընդունում է կոլտնտեսության ընդհանուր ժողովը) ցուցակագրման քարտերը լրացնելու համար լիազորված հատուկ աշխատակիցն անցնում է բամբակացանների հայտեր հավաքելու և լրացնելու աշխատանքին.

Գյուղսերմանման հանձնաժողովի ներկայացուցիչը յուրաքանչյուր բամբակացանին առանձին-առանձին հարցնում է, թե վերջինս վորչափ բամբակ է ուզում ցանել առաջիկա 1932 թվին:

Ցուցակագրման քարտերը լրացնելիս, առանձնապես ուշադրություն պետք է դարձնել այն բամբակացանների վրա, վորոնք անցյալ տարվա համեմատությամբ բամբակենու քիչ տարածություն են ցանկանում հատկացնել:

Գյուղսերմանման հանձնաժողովի ներկայացուցիչը առանձնապես ուշադրություն պիտի դարձնի պարզելու նման յերևույթի պատճառը: Նման բամբակացանների ցուցակագրման քարտերը պետք է ընդհանուր ժողովի առանձնակի և հատուկ քննության առարկա դառնան: Յուրաքանչյուր բամբակացան ինքն է անմիջապես անում բամբակացանքսի մասին իր հայտը, վոչ մի դեպքում չի թույլատրվում ուրիշի համար հայտեր ներկայացնել:

## Պլանի հետադարձ քննությունը

Հայտերի հանրագումարները կազմվում են ցուցակագրման քարտերի միջոցով և միաժամանակ պարզվում, թե տվյալ գյուղում կամ կոլտնտեսության մեջ բամբակի համար վորքան տարածություն է ցուցակագրված: Այս կատարվում է ստուգում, թե հայտարարված ցանքերի տարածությունը վորքան է համապատասխանում ընդհանուր ժողովի հաստատած ծրագրին:

Այս բոլորից հետո հավաքված հայտերը նախ ներկայացվում են չքավորական խմբակի, ապա գյուղի ընդհանուր ժողովի քննության:

Ծանոթ. Կոլտնտեսություններում առանց ընդհանուր ժողով հրավիրելու ծրագիրը վերջնականապես կարելի չէ հաստատել միայն այն դեպքում, յերբ ցուցակագրված տարածությունը համապատասխանում է ընդհանուր ժողովի կողմից մատնանշված տարածությանը:

Այս ժողովներում քննվում և ընդունվում են բամբակացանների հայտերը, ցանքսի ծրագրները, հանվում են համապատասխան վորոշումներ տեղի ունեցած փոփոխությունների մասին, ըստ վորում առանձին ուշադրությամբ քննվում են այն բամբակացանների հայտերը, վորոնք պակասեցրած հայտեր են ներկայացրել անցյալ տարվա ցանքերի համեմատությամբ:

Յեթե հայտերի հանրագումարը ցույց է տալիս բամբակացանքսի տարածության նվազում ընդունված ծրագրների համեմատությամբ տվյալ



գյուղում, ապա բամբակացանների ընդհանուր ժողովը հայտեր հաստատելիս քննության է առնում պակասեցրած տարածությունը, վորը բամբակացանների միջև պետք բաշխվի, վորպեսզի ընդհանուր ժողովի կողմից նախորոք հաստատված ծրագիրն ամբողջությամբ իրացված լինի: Ընդհանուր ժողովն այս կամ այն բամբակացանի կողմից հայտարարած բամբակացանքսի տարածությունն ավելացնելու դեպքում, բազմակողմանի պետք է քննի և հաշվի առնի տվյալ տնտեսության արտադրական բոլոր հնարավորությունները:

Ընդհանուր ժողովի վորոշումները, հայտեր կամ այլ ցուցակներ փոփոխելու մասին, մտցվում են բամբակացանի ծրագրի (ցուցակ) մեջ և առանձնապես նշանակվում են ընդհանուր ժողովի արձանագրություններում: Ընդհանուր ժողովի արձանագրությունները չբարդացնելու նպատակով անհրաժեշտ է հիշյալ արձանագրություններում հիշատակել այս կամ այն բամբակացանին վերաբերյալ յեղած փոփոխությունները: Գյուղացիների փոփոխությունների չյենթարկված հայտերը հաստատվում են վորոշման մի ընդհանուր կետով:

Ընդհանուր ժողովի արձանագրությունը պետք անպայման ստորագրվի նախագահի և քարտուղարի կողմից: Հիշյալ արձանագրությանը պետք կցել ժողովին մասնակցողների ցուցակը:

Ծրագրների քննությունը և հայտեր հավաքելու աշխատանքներն ավարտելուց հետո, բոլոր նյութերը հաստատվում են գյուղխորհրդի կողմից և հանրագումարային յեզրակացությամբ և գյուղխորհրդի

ծրագրի հետ միասին հանձնվում է ՄՏԿ-ին: Գյուղխորհրդի համայնքային պլանը քննության է առնվում գյուղխորհրդի նիստում, որին պարտադիր կերպով մասնակցում են շրջսերկոմի, շրջջրտնտեսության ներկայացուցիչները և ՄՏԿ շրջանային գյուղատնտեսը:

Ծանոթություն. 1. Նոր կոլտնտեսություններ կազմակերպելու դեպքում, մինչև վերջինի օրինական ձևակերպումը և հաստատումը, հայտեր հավաքելը կատարվում է անհատական կարգով: Հիշյալ կոլտնտեսությունը ձևակերպվելուց հետո, բոլոր այն բամբակացանների քարտերը, որոնք մտել են կոլտնտեսության մեջ, հանձնվում են կոլտնտեսության վարչությանը և տվյալ կոլտնտեսության համար կազմվում է ցանքսի ծրագիր:

2. Անհատ բամբակացանները, երբ ցանկություն են հայտնում մտնել արդեն գոյություն ունեցող կոլտնտեսության մեջ և, երբ նրանց ընդունելությունը համապատասխան կերպով ձևակերպվում է, ցուցակագրման քարտը և նախատեսված տարածությունն անմիջապես հանձնվում է տվյալ կոլտնտեսությանը և ավելացվում վերջինիս բամբակացանքսի ծրագրին:

3. Համապատասխան փոփոխություն մտցվում է գյուղխորհրդի և շրջանի ամփոփիչ ծրագրի մեջ:

Գյուղխորհրդի ստուգած ծրագրերն իրենց համապատասխան նյութերով ստուգվում են ՄՏԿ-ի կողմից և, այսպես կազմվում է շրջանի համար մի



ընդհանուր ծրագիր, վերջինն այս քննության է առնվում ՄՏԿ-ի լայնացած նիստում՝ մասնակցությամբ շրջհողբաժնի, շրջանային գյուղատնտեսների, կոլտնտեսության, արտադրական ընկերությունների, բամբակազտիչ գործարանի վարչության ներկայացուցիչների և այն բոլոր աշխատակիցների ներկայությամբ, որոնք ղեկավարում են բամբակացանքսի աշխատանքը գյուղում և կոլտնտեսություններում:

Ծանոթություն. Երկու վարչական շրջան ընդգրկող ՄՏԿ-ի նիստին հրավիրվում են 2 շրջաններից էլ ներկայացուցիչներ:

ՄՏԿ խորհուրդը որոշումներ կայացնելիս անպայման հաշվի յի առնում գյուղական ժողովների առաջարկությունների բոլոր կետերը և որոշումները: ՄՏԿ ծրագրեր քննելիս իրավունք չունի փոփոխելու այս կամ այն բամբակացանի հայտը՝ առանց վերջինիս համաձայնության: ՄՏԿ խորհրդի քննած ծրագիրը հանձնվում է շրջսերմկոմխորհի քննության, իսկ վերջինս հանձնում է շրջգործկոմին վերջնական հաստատման համար: Շրջգործկոմի կողմից հաստատված ծրագիրն ուղարկվում է Հանրապետական Հ.Ժ.Կ., Անդրբամբակկենտրոնի հանրապետական բաժանմունքներին և Անդրբամբակկենտրոնին:

Շրջգործկոմի կողմից հաստատված տվյալ շրջանի բամբակացանքսի տարածությունը և գյուղական ցանքսային ծրագրերը համարվում են վերջնական, որոնց հիման վրա էլ կատարվում է բամբակացանների կոնտրակտացիան և վարկավորումը:

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՌ Арм. ССР
им. А. Мясникяна
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գյուղխորհուրդները հետևելու յեն, վորպեսզի բամբակացանների թվում չմտնեն արհեստականորեն բաժան-բաժան յեղած տնտեսությունները (լրացուցիչ վարկեր ստանալու նպատակով), այլև այնպիսի տնտեսություններ և անհատներ, վորոնք մտադիր չեն բամբակ ցանել և հայտ են ներկայացնում ավանսներ ստանալու նպատակով: Հայտեր ընդունելու ժամանակ նոր առաջացած (բաժանված) տնտեսությունների հայտերը ընդունվում են միայն գյուղխորհրդի գրավոր վկայությունից հետո:

Գյուղերից և կոլտնտեսություններից ստացված բոլոր նյութերը պահվում են ՄՏԿ-ում և օգտագործվում են հետագայում կոնտրակտացիոն կամպանիա անցկացնելու համար:

Բամբակազտիչ գործարանի վարչությունը և նրա ակտիվը սերտ մասնակցություն են ցույց տալիս բամբակացանքսի ծրագրերն անցկացնելու և հայտեր հավաքելու գործին, օժանդակելով ՄՏԿ-ի բոլոր ձեռնարկումներին:

## Ինֆորմացիոն տեղեկանքներ ներկայացնելու կարգի և ժամկետների մասին

Հայտեր հավաքելու ընթացքի մասին ՄՏԿ կազմում է հնգօրյա հեռագրական տեղեկանքներ, ըստ №1 ձևի և ուղարկում է Անդրտրակտորկենտրոնի հանրապետական բաժանմունքին և Անդրտրակտորկենտրոնին: № 2 տեղեկագրերը ներկայացվում են նույն կազմակերպություններին, գործարանի վար-



չությանը և շրջգործկոմին գրավոր ձևով և նույն ժամկետներում:

---

## ՀԱՎԵԼՎԱԾ

## ՑՈՒՑԱՏԵՏՐ

1932 թ. կոլտնտեսություններում և մասնավոր չքավոր-միջակ տնտեսությունների բամբակացանքսի ծրագրի հարցերը լրացնող աշխատանքի համար

Բլանկներ լրացնող աշխատակիցն անցնում է կոլտնտեսությունների և անհատական բամբակացանքսի ցուցակագրման աշխատանքներին՝ նախորոք շրջանային կազմակերպությունների կողմից գյուղխորհրդի տված ծրագիրը գյուղխորհրդում քննելուց և գյուղերում ու կոլտնտեսություններում բացատրական կամպանիա տանելուց հետո: Գյուղխորհրդում ծրագրի քննությունը (գյուղերում և կոլտնտեսություններում մինչև կամպանիայի սկիզբը) կատարվում է գյուղխորհուրդների նիստում՝ շրջանային սերմանման հանձնաժողովի ներկայացուցչի ղեկավարությամբ, այլ և ՄՏԿ և շրջջրտընտեսության ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ:

Գյուղխորհուրդը շրջանից ստացված ստուգիչ առաջադրանքները քննելիս և գյուղխորհրդի շրջանի համար վերջնական ցանքսի ծրագիր հաստատելիս՝ յելնում է ցանքսի պլանի հողերը ջրով ապահոված

ելնելուց և բնակչության արտադրական հնարավորություններից:

Գյուղխորհուրդը վերացնում է ցանքսի ծրագրային տարածության բաշխումը գյուղերի միջև և բամբակացանների տարբեր խմբակների համար տնտեսություններ. սահմանում (կոլտնտեսությունների, անհատական չքավոր - միջակ և կուլակային տնտեսությունների համար): Հիշյալ ժողովին ներկա է գտնվում տվյալ գյուղի ցանքսերը ցուցակագրող աշխատակիցը:

Գյուղխորհրդի նիստի արդյունքները ցուցակագրվում են № 3 աղյուսակի «բ», «գ» և «դ» սյունյակներում՝ ըստ գյուղխորհրդի հանրագումարի: Այս բլանկը հանդիսանում է ստուգիչ միջոց պլանները գյուղերում և կոլտնտեսություններում անցկացնելու աշխատանքներն ստուգելու համար:

Լրացված № 3 ստուգիչ բլանկը պահվում է գյուղխորհրդում:

Կուլակ տնտեսություններին տրված կայուն առաջադրանքների կենսագործումը կատարում է գյուղխորհուրդը: ՄՏԿ ներկայացուցիչը կատարում է բացառապես կոլտնտեսությունների և անհատական չքավոր - միջակ տնտեսությունների հետ կապված աշխատանքը:

Գյուղում բամբակացանքսի աշխատանքը կատարում է գյուղական սերմկոմը հետևյալ կազմով. գյուղխորհրդի, գյուղական արտադրական ընկերության ներկայացուցիչները (որտեղ այդպիսիները գոյություն ունեն) և շրջանային կազմակերպություններին կցված ներկայացուցիչների մասնակցությամբ:



Գյուղական սերմկոմը նախ հրավիրում է չքավորական խմբակի ժողով և ապա բամբակացանների ընդհանուր ժողով: Կոլտնտեսություններում նույնպես նախ կայանում է չքավորների, ապա կոլտնտեսության բոլոր անդամների ընդհանուր ժողովը:

ՄՏԿ-ի աշխատակիցը բլանկի համապատասխան հարցերը լրացնելով՝ ծրագիրը տեղ հասցնելու աշխատանքը համարում է ավարտած: Բլանկներ լրացնող ընկերների աշխատանքներն ստուգում են տեղամասային գյուղատնտեսները և ՄՏԿ ավագ գյուղատնտեսը:

## № 1 ձևի լրացումը

Կոլտնտեսություններում չքավոր խմբակի անդամների ընդհանուր ժողովներից հետո վարչության լայնացած նիստում քննվում և ստուգվում է ունեցած նյութերի համաձայն գյուղխորհրդից ստացված ծրագիրը և կոլտնտեսության վարչության ցուցմունքներով լրացվում է № 1 ձևը:

№ 1 ձևը լրացնելիս հանձնարարվում է ունենալ ձեռքի տակ 1931 թ. կոլտնտեսության արտադրական ծրագիրը: Ջոկված ընկերը բլանկները լրացնելիս՝ պետք է հետևի, որ ոչ մի սյունյակ չմնա առանց լրացնելու:

20—43 հարցերի ամեն մի ցուցակը պետք է քննության առնվի ժողովի կողմից: Մեքենայորեն ցուցակներ լրացնելը չի թույլատրվում:

№ 1 սյունյակում նշանակվում է կոլտնտեսությունների տնտեսությունների քանակը առ 1 ապրիլի 1931 թ.:

№ 2 սյունյակում նշանակվում է 1931 թ. բամբակենու իրական ցանքսը գարնանը, բայց վոչ բամբակահավաքի տարածությունը: Որինակ, յեթե կոլտնտեսությունը ցանել է 100 հեկտ., բայց զանազան պատահարների հետեվանքով փչացել է ցանքսի մի մասը և բամբակահավաքի ժամանակ մնացել է ավելի քիչ տարածություն՝ № 2 սյունյակում, անկախ այդ փոփոխություններից՝ նշանակվում է 100 հեկտ. բամբակացանքս:

№ 3 սյունյակում նշանակվում է կոլտնտեսությունների անդամների ցանքսի 1931 թվին անհատական կարգով ցանված ու մշակված տարածությունը: Այդ ցուցակի մեջ են մտնում նաև կոլխոզի նոր անդամների անհատական ցանքսի տարածությունները, կամ նույնիսկ հներից նրանցը, վորոնք ունեն բամբակենու անհատական ցանքս:

№ 4 սյունյակում նշանակվում է կոլտնտեսության բլանկներ լրացնելու որն յեղած տնտեսությունների թիվը:

№ 6 սյունյակում նշանակվում է միայն բնակչության աշխատունակ մասը 15—59 տարեկան, այսինքն՝ այս սյունյակում նշանակված թվում չպետք է մտցնել ինվալիդ և վոչ աշխատունակ կոլտնտեսականներին:

№ 7—19 սյունյակներում նշանակվում են կոլտնտեսության և կոլտնտեսականների համայնացրած արտադրական միջոցները:



№ 17 սյունյակում նշանակվում է յեղած ցանելու մեքենաների և խոփիկների քանակը: Որինակ. յեթե կոլտնտեսությունը ունի 10 յերկշարքային ցանքսի մեքենա և 7 միաշարքային՝ ապա 18 սյունյակում գրվում է 27 խոփիկ:

№ 20 սյունյակը լրացվում է 21—36 սյունյակները լրացնելուց հետո, № 20 սյունյակում նշանակվում է 21, 22, 23, 24, 25, 26, 27 և 34 սյունյակների գումարը:

Յեթե կոլտնտեսությունը 21—27 սյունյակներում հիշատակված կուլտուրաներից չի ցանելու, համապատասխան սյունյակում գրվում է գիծ (—):
վում է գարնանացած գարու, գանրանացած վարսակի և գարնանացած ցորենի տարածությունը:

23—րդ սյունյակում նշանակվում է գարնանացած գարու, գարնանացած վարսակի և գարնանացած ցորենի տարածությունը:

Յեթե կոլտնտեսությունը 1932 թ. բամբակացանքսի ճշգրիտ ծրագիրը դեռ ևս չունի, ապա 23, 24, 25, 26 և 27 սյունյակներում նշանակվում են մոտավոր թվեր:

№ 36 սյունյակում նշանակվում է «այո» կամ «վոչ», նայած թե տվյալ կոլտնտեսության իրապես բամբակացանքսի համար հողամաս ցո՞ւյց է տրված թե վոչ: Կոլտնտեսությանը տրված հողամասը համարվում է ձևակերպված, յեթե շրջհողբաժնի կողմից առանձնացրած հողամասը համաձայնեցված է հողբաժնի, գյուղխորհրդի, շրջգործկոմի կողմից և այդ հողամասը հայտնի յե կոլտնտեսությանը:

№ 37—43 սյունյակներում նշանակվում են ծրագիրը իրագործելու համար կոլտնտեսության կողմից ձեռնարկվելիք միջոցառումները, ըստ վորում հանձնաժողովը ստուգում է այդ միջոցառումների իրագործման իրական հնարավորությունները:

№ 40 սյունյակում նշանակվում է այն տարածությունը, վորը կոլտնտեսությունը մտադիր է պարարտացնել գոմաղբով (200 ցենտ. մի հեկտարին) այդ նպատակի համար օգտագործելով թե համայնական և թե կոլտնտեսության պատկանող գոմաղբը: Յեթե կոլտնտեսությունը կատարում է չիթիլային ցանքս, ապա ձիու թարմ աղբը ամբողջությամբ պահվում է ջերմանոցի համար:

41 սյունյակում նշանակվում է աշնանավարի այն տարածությունը, վորը գարնանը պիտի յենթարկվի կրկնավարի՝ մինչև արաթ անելը: Կրկնավար պիտի կատարել այն բոլոր աշխատավոր հողերում, վորտեղ տարածվում է խիստ մոլախոտեր:

42 սյունյակում պիտի նշանակել այն տարածությունը, վորտեղ կոլտնտեսությունը պիտի կատարի կատարելագործված վեգետացիոն վոռոգում ակոսների միջոցով:

43 սյունյակում նշանակվում է այն տարածությունը, վորտեղ կոլտնտեսությունը, ՄՏԿ ղեկավարությամբ, ջրաբաշխման ցանցը կենթարկի փոփոխության:

Բոլոր աշխատանքները գրանցվում են առանց այն տարբաժանելու (լծկան կամ տրակտորային ուժի):



Ծրագրների քննության պրոցեսում լրացվում է № 1 բլանկը (սևագիր): Սևագիրը արտագրվում է այն դեպքում, յերբ սկզբնական բլանկները (սևագիր) ամբողջովին հաստատվում են կոլտնտեսության վարչության կողմից. բլանկը ստորագրում է ձեր լրացնող աշխատակիցը, ապա կոլտնտեսության վարչությունը և հանձնաժողովը: Յեթե ծրագրի առթիվ կոլտնտեսությունը ունի վորոշ նկատողություններ, այդ նկատողությունները մտցվում են ընդհանուր ժողովի արձանագրությունների մեջ, վորի պատճենը կցվում է ՄՏԿ-ին հատկացրած օրինակին:

Ձև № 2

Անհատական բամբակացանի բլանկը (ձև № 2) լրացվում է բամբակացանի հարցաքննության ժամանակ: Հարցաքննությունը կատարում է գյուղխորհրդի կամ արտադրական ընկերության անդամը:

Գյուղխորհուրդը նախորոք հայտնում է բամբակացաններին հանձնաժողովի գալու օրվա մասին: Բլանկներ լրացնող աշխատակիցը մնում է գյուղում մինչև չքավոր-միջակ տնտեսությունների բոլոր բամբակացանները կհարցաքննվեն: Որական ամեն մի աշխատակից պիտի ցուցակագրի վոչ պակաս քան 70—80 բամբակացան:

Բամբակացաններին հարևան գյուղեր կանչելը չի թույլատրվում, բոլոր բամբակացանները հարցաքննվում են իրենց գյուղերում:

Բլանկներ լրացնելիս պետք է ղեկավարվել հետևյալով՝

3 կամ 4 սյունյակներում նշանակվում է ձողիկ (I) գյուղխորհրդի ցուցմունքով։

19—25 սյունյակներում նշանակվում են տվյալ բամբակացանքսի տարածությունը, ըստ վորում հանձնաժողովը նախորոք բամբակացանի հետ միասին քննում է նրա արտադրական հնարավորությունները և նշանակում այն հողամասը, վորտեղ պիտի կատարվի բամբակացանքը։

27 սյունյակում նշանակվում է բամբակացանի կատարելիք աշնանացանի չափը։

28 սյունյակում բամբակացանը ստորագրում է, վոր նախատեսված պլանը կարող է կատարել։

Անգրագետների փոխարեն ստորագրելը չի թույլատրվում։ Անգրագետ բամբակացանները ստորագրում են մատի դրոշմամբ։

Հանձնաժողովի աշխատանքները դյուրացնելու համար անհրաժեշտ է, վոր բլանկներ լրացնող աշխատակիցը ունենա իրեն մոտ ա) նախկին Շրջբամբակմիության 1931 թ. ցուցակագրման քարտերը, բ) գյուղխորհրդից ստացված գյուղացիների ցուցակները։

Բամբակացանների ցուցակագրումից հետո կազմըվում է ըստ գյուղի հանրագումար, վոր և տրվում է չքավորական, ապա գյուղի ընդհանուր ժողովի քննությանը։

Ձև № 3.

Բլանկներ լրացնող աշխատակիցը, գյուղի աշխատանքները ավարտելուց հետո (կոլտնտեսություննե-



րում և անհատ բամբակացանների) շրջանային գյուղատնտեսի ներկայությամբ և ղեկավարությամբ լրացնում է № 3 ձևը (ընդհանուր պլան ըստ գյուղխորհրդի)։ Ընդհանուր պլանը լրացնելիս պիտի ղեկավարվել հետևյալով՝

Յուրաքանչյուր գյուղի տվյալները պիտի կազմըվի առանձին։

«Ա.» բաժնի № 5—6 սյունյակները լրացվում են համաձայն № 2 ձևի 3—4 սյունյակների գումարների։

ՄՏԿ աշխատակիցը 7-րդ սյունյակի համար տեղեկանքներ ստանում է գյուղխորհրդից։

9—20 սյունյակներում գրվում են գյուղերի հանրագումարները, վորոնք ստացվում են № 1 ձևի բլանկների հանրագումարից։

21—29 սյունյակներում գրվում են գյուղերի հանրագումարները, վորոնք ստացվում են № 2 ձևի բլանկը լրացնելիս։

«Բ» բաժնում, №1 և №2 ձևի բլանկներում, գյուղերում լրացված հանրագումարների հիման վրա, լրացվում են 11, 12, 13, 19, 20 և 21 սյունյակները։ ՄՏԿ աշխատակիցը 22 սյունյակի համար տեղեկանքներ ստանում է գյուղխորհրդից։

3—10, 14—18 սյունյակները փոխանցվում են գյուղխորհրդից ստացվող № 3 ստուգիչ բլանկից (տես վերևը)։

3 և 14—20 սյունյակները լրացվում են «գ» բաժնի № 1 և 2 ձևերի հաշվառման հիման վրա։

Յեթե ստուգիչ բլանկի և հաշվառումների միջև տարբերություն չկա, ապա «գ» բաժնի մնացած սյու-

նյակների տվյալները վերցվում են ստուգիչ բլանկից։ Տարբերության դեպքում՝ գյուղխորհուրդը այդ հարցը քննության է առնում, որից հետո միայն լրացվում են բլանկները։

«գ» բաժնում 3—9 սյունյակների տեղեկանքները լրացվում են № 1 ձևի բլանկի հանրագումարների հիման վրա։

10 սյունյակը լրացվում է բլանկ № 2 ձևի տեղեկանքների հիման վրա, իսկ մնացած սյունյակների տվյալները վերցվում են ստուգիչ բլանկ № 3 ձևից (յեթե գյուղերում բամբակացանքսի ծրագրի քննության ժամանակ ագրոձեռնարկումների չափերի մեջ փոփոխություն չի մտցված. հակառակ դեպքում գրվում են գյուղի ընդհանուր ժողովի կողմից ընդունված թվերը)։

Գյուղխորհրդի նիստին շրջջրտնտեսության ներկայացուցչի մասնակցությամբ քննվում է կազմված ընդհանուր ծրագիրը ըստ գյուղխորհրդի և լրացվում են «գ» բաժնի չլրացված սյունյակները։

Գյուղխորհրդի արձանագրության մեջ պետք է գրվի ստուգիչ և ընդհանուր բլանկների տարբերությունների մասին յեզրակացություն։ Գյուղխորհուրդըն իր արձանագրությունների մեջ պետք է ունենա յեզրակացություն՝ ստուգիչ և ընդհանուր բլանկի միջև յեղած տարբերությունների մասին, այլև ընդհանուր պլանի մասին, որից հետո գյուղխորհուրդը հաստատում է գյուղերում կատարված աշխատանքը։

Գյուղխորհրդի նիստից հետո № 3 ձևը լրացվում է 3 օրինակ և ստորագրվում է։ Նիստի արձա-



նագրության մեկ պատճենը կցվում է ՄՏԿ հատկացվելիք ընդհանուր ծրագրին։

№№ 1, 2 և 3 ձևի լրացված և ձևակերպված բլանկները ներկայացվում են ՄՏԿ շրջսերմհանձնաժողովին զեկուցելու և դրանից հետո շրջանի ընդհանուր ծրագիր կազմելու համար։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀՍՍՀ ССР
им. А. Мясникяна
ԱՆՎԱՆ

ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ՆԿԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ՀՀ Ազգային գրադարան
NL0293492

Գինի

19.206

415

Арм.
2-5481